



„Համառոտ հաղորդումներ . Краткие сообщения. Short communications.“

Հայաստանի կենսաբ. հանդես, 4(61), 2009

**ԳԱՍՏՐՈՔՆԵՐԻՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ
ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՎ**

Ա.Վ. ՄԱՆԱՍՅԱՆ, Ա.Ռ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ, Վ.Կ. ՄԿՐՏՅԱՆ

*Հայաստանի պետական ագրարային համալսարան
Թերապիայի, կլինիկական ախտորոշաբանության և դեղաբանության ամբիոն*

Առաջարկված է դեղախառնուրդ (տետրավիտ, մետրոնիդազոլ տիլոզին)՝
խոճկորների գաստրոէնտերիտի բուժման համար:

Առաջարկված միջոցը առողջ կենդանիների օրգանիզմի կլինիկա-
արյունա-կենսաքիմիական ցուցանիշների վրա որևէ բացասական ազդեցու-
թյուն չի թողնում: Զգալիորեն կրճատում է բուժման օրերի քանակը,
ապահովում է բարձր կենսունակություն (սխստ նվազում է անկման տոկոսը):

Առաջարկվող միջոցը, ըստ երևույթին, կարգավորում է իմունային
պատասխանը, բարձրացնում օրգանիզմի հակասթրեսային կայունությունը,
ինչը չափազանց կարևոր հանգամանք է խոզաբուծության համար:

*Խոճկոր - գաստրոէնտերիտ - պատրաստուկների համակցություն -
արյունաբանական ցուցանիշներ*

Предложена лекарственная смесь (тетравит, метронидазол, тилозин) для
лечения гастроэнтерита поросят.

Это средство не оказывает какого-либо отрицательного влияния на
клинические, гематологические и биохимические показатели животных. Оно
способствует значительному сокращению срока лечения, повышению
жизнестойкости животных (существенное снижение процента падежа).

По всей видимости, оно регулирует иммунный ответ, повышает анти-
стрессовую устойчивость организма, что является важным обстоятельством
для свиноводства.

*Поросенок - гастроэнтерит - сочетание препаратов -
гематологические показатели*

Mixture of medicines offered by us (tetravit, metronidasol, tilozin) is for treatment
of the piglets gastroenteritis.

That mixture doesn't affect badly animals' clinical, hematological, and biochemical
parameters. It promotes to considerable reduction of treatment time and increase of
animal vitality, (considerable reduction of mortality percent).

The mixture probably regulates immune answer, increases antistressing resistance of
organism, that is very important circumstance for pig breeding.

*Piglet - gastroenteritis - combination of medicines - hematological
parameters*

Հայաստանի խոզաբուծական ֆերմաներում լայն տարածում ունեն մարսողական համակարգի հիվանդություններն, որոնք զգալի տնտեսական վնաս են հասցնում անասնապահությանը: Այդ խմբի հիվանդությունների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում գաստրոէնտերիտները:

Գաստրոէնտերիտների առաջացման պատճառները բազմազան են, սակայն 15-20 օրական խոճկորների մոտ հիմնական պատճառներից է հանդիսանում ժամանակից շուտ լրացուցիչ կերերով կերակրումը, որը հանգեցնում է մարսողության խանգարման, պայմանական ախտածին մանրէների աճին և զարգացմանը:

Լրացուցիչ կերերը և մարսողական համակարգում զարգացող միկրոֆլորան գրգռում են ստամոքսի և աղիների լորձաթաղանթը, որի հետևանքով ռեֆլեքսորեն խանգարվում է հյութազատիչ, շարժողական, մարսողական և այլ ֆունկցիաներ (2):

Բորբոքման դեպքում ստամոքսի և աղիների լուսանցքում արտազատվում է սպիտակուցներով հարուստ արտաքիրտ, որը նպաստում է խմորանեխային բակտերիաների բազմացմանը: Աղիների պարունակության քայքայման հետևանքով առաջանում են թունավոր նյութեր (ինդոլ, սկատոլ, ֆենոլ, կրեզոլ, կադավերին և այլն), որոնք գրգռելով աղիների ընկալիչները էլ ավելի են բարդացնում գործընթացը:

Այդ թույների ազդեցությունից խանգարվում է մի շարք օրգան-համակարգերի բնականոն գործունեությունը: Օրգանիզմը ենթարկվում է ինքնաթունավորման: Նմանատիպ բազմակողմանի ախտածին մեխանիզմների զարգացման պայմաններում մատղաշը շատ արագ հյուծվում և անկում է (1):

Գաստրոէնտերիտների բուժման տարաբնույթ մոտեցումների առկայության պայմաններում միևնույն է, արդի գործնական անասնաբուժությունը հանդիպում է լուրջ դժվարությունների:

Բուժման բազմաթիվ մեթոդների շարքում հատկապես առանձնանում է տարբեր դեղապատրաստուկների համատեղ ներմուծման անհրաժեշտությունը, ինչը կապված է տնտեսական և այլ ծախսերի հետ:

Մեր աշխատանքի նպատակն էր ստանալ առավել տնտեսապես և բուժարդյունավետ դեղապատրաստուկ:

Նյութ և մեթոդ: Փորձերը կատարվել են Արգնու SՅԻՍ ԲԲԸ-ն տնտեսությունում, 15-20 օրական 62 գլուխ խոճկորների վրա:

Մեր առաջարկած դեղանյութերի համակցությունն ունի հետևյալ բաղադրությունը՝ տեսրավիտ 12 մլ, մետրոնիդազոլ 100 մգ, տիլդիին 8 մլ:

Համակցությունը ներարկվել է ներմկանային՝ 1 մլ /10 կգ կենդանու զանգվածի հաշվով, օրական մեկ անգամ:

Փորձախմբերը կազմավորվել են և համեմատության սկզբունքով բաժանվել 4 խմբի. 1-ին խումբ՝ ստուգիչ խոճկորներ, 2-րդ՝ առողջ խոճկորներ, որոնք ստացել են պատրաստուկների նոր համակցությունը, 3-րդ՝ հիվանդ խոճկորներ, որոնք բուժվել են մինչև այժմ կիրառվող մեթոդով (դիսպարկոլ), 4-րդ՝ հիվանդ խոճկորներ, որոնք բուժվել են մեր կողմից առաջարկված պատրաստուկների համակցությունով:

Դիսպարկոլը (Dizparcolum) հակաբակտերային դեղամիջոց է, որի 1 մլ պարունակվում է՝ լեոմիցետին 50, մետրոնիդազոլ 20 և տիլդիին 20 մգ: Պատրաստուկը ներարկվում է ներմկանային, երկնվազ կամ եռանվազ:

Դեղապատրաստուկի ազդեցության գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ կլինիկաարյունաբանական ցուցանիշները՝ անոթազարկ, շնչառություն, ջերմաստիճան, հեմոգլոբին, էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, արյան պահեստային հիմնայնություն, արյան ընդհանուր սպիտակուց և նրա բաղադրամասեր, որոնք որոշվել են ընդունված մեթոդներով:

Գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորները ախտորոշվել են հետազոտման կլինիկական և լաբորատոր մեթոդներով՝ հաշվի առնելով անամնեստիկ տվյալները, կլինիկական նշանները (փորլուծություն), անկած կենդանիների դիախերման պատկերը (3):

Արդյունքներ և քննարկում: Լաբորատոր պայմաններում որոշվել է ընտրված դեղաբաղադրիչների քիմիական համատեղելիությունը (նստվածքի գոյացում, pH-ի փոփոխություն և այլն):

Հետազոտության արդյունքները բերված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Կլինիկա-արյունաբանական ցուցանիշները

Կենդանիների խմբերը	Ձերմ, °C	Պուլս /ր	Շնչառ. /ր	Էրիթրոցիտ 10 ¹²	Լեյկոցիտ 10 ⁹	Հեմոգլոբին, գ/լ	Շնչ. սպիտակուց, գ/լ	Ալբումին, (	Գլոբուլիններ %		
									(	(	(
Առողջ	39,7	103	20	6,4	9,2	90,2	76,8	46,3	16,1	17,2	20,4
Առողջ + համակցություն	39,5	106	21	6,65	9,45	94	78,4	42	17,5	18,1	22,4
Գ/Է(	40,1	124	28	7,9	12,8	117,3	54	48,1	14,8	16,7	20,4
Գ/Է + դիսպար-կոնյ((	39,1	109	21	6,6	9,98	98,2	77,5	43,7	17,2	17,7	21,4
Գ/Է + համակցություն	39,6	105	20	7,2	9,95	98,2	78,8	45,7	17,9	14,4	22,0

(գ/Է- գաստրոէնտերիտ

Առաջարկված համակցությամբ բուժումը տևել է 4-5 օր, իսկ դիսպարկոնյվ՝ 6-7 օր:

Աղյուսակում բերված ցուցանիշներից երևում է, որ գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ գրանցվում է մարմնի ջերմության բարձրացում, պուլսի և շնչառության արագացում:

Դիսպարկոնյի ներարկման դեպքում այդ ցուցանիշները մոտենում են առողջ կենդանիների ցուցանիշներին, ինչպես և համակցության ներարկման դեպքում:

Արյունաբանական ցուցանիշներից էրիթրոցիտների քանակը և հեմոգլոբինի պարունակությունը (առողջ կենդանիների հետ համեմատած) գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ եղել է բարձր, համապատասխանաբար՝ 23,6 և 30 (- ով:

Դիսպարկոնյի ներարկման ֆոնի վրա այդ ցուցանիշները նվազում են և մոտենում նորմայի սահմաններին, ինչը նկատվում է նաև մեր կողմից առաջարկվող համակցության ներարկման դեպքում (դիսպարկոնյի կազմից հանված է լնոմիցետինը և փոխարենը մտցվել է տետրապիտ), սակայն պետք է նշել վերջինիս նպատակահարմարության մասին, քանի որ օրգանիզմ են ներմուծվել նաև վիտամիններ:

Գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ դիտվել է լեյկոցիտոզ (39 ()): Ինչպես դիսպարկոնյի, այնպես էլ առաջարկվող դեղապատրաստուկների համակցությունով բուժելու դեպքում, լեյկոցիտների քանակը իջնում է մինչև նորմայի սահմանները:

Գաստրոէնտերիտով հիվանդ կենդանիների մոտ նկատվում է հիպոպրոտեինեմիա (ընդհանուր սպիտակուցի քանակը նորմայի համեմատ ցածր է 29,7 ()): Դիսպարկոնյի ներարկման դեպքում ընդհանուր սպիտակուցի քանակը բարձրանում է 0,9 (-ով, իսկ համակցության ներարկման դեպքում՝ 2,6 (-ով:

Ալբումինների քանակը համեմատած առողջ գլխաքանակի հետ գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ բարձր է՝ 1,8 (-ով: Դիսպարկոնյի ներարկման ֆոնի վրա այն չի մոտենում նորմային, իսկ համակցության ներարկման դեպքում այն ավելի մոտ է նորմայի սահմաններին:

(-Գլոբուլինների քանակը գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ նվազում է 1,3 (-ով: Դիսպարկոնյի ներարկման ֆոնի վրա (-գլոբուլինների քանակը բարձրանում է առողջ կենդանիների ցուցանիշից 1,1 (-ով, իսկ մեր առաջարկված համակցության ներարկման դեպքում՝ 1,8 (- ով:

(-Գլոբուլինների քանակը հիվանդ խոճկորների մոտ նվազում է 0,5 (-ով: Դիսպարկոլի ներարկման դեպքում (-գլոբուլինների քանակը նորմայի համեմատությամբ բարձրանում է և գերազանցում նորմայի ցուցանիշը 0,5 (-ով: Նոր համակցության ներարկման ֆոնի վրա այն իջնում է 2,8 (-ով: (Այս փաստը վկայում է այն մասին, որ նոր համակցությունը ունի ակտիվ հակատոքսիկ ազդեցություն):

Գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների մոտ դիսպարկոլի ներարկման պայմաններում (-գլոբուլինների քանակը ավելանում է 1,0 (-ով: Համակցության ներարկման ֆոնի վրա (-գլոբուլինների քանակը ավելանում է 1,6 (-ով: (Նոր համակցությունը խթանում է օրգանիզմի բնական դիմադրողականությունը):

Հետազոտությունների արդյունքները հնարավորություն են ընձեռում կատարել հետևյալ եզրահանգումները.

Առաջարկված պատրաստուկների համակցությունը զգալիորեն խթանում է ոսկրածուծի արյունազոյացման ֆունկցիան: Բարձրանում է էրիթրոցիտների քանակը և հեմոգլոբինի պարունակությունը:

Գաստրոէնտերիտով հիվանդ խոճկորների լեյկոցիտների քանակը համակցության ներմուծման 4-5 օրը մոտենում է երկնայինին:

Համակցության ազդեցությունից բարձրանում է արյան ընդհանուր սպիտակուցի և նրա բաղադրամասերի քանակը: Պատրաստուկների համակցության կիրառման դեպքում բարձրանում է (- և (-գլոբուլինների և ալբումինների քանակը, ինչը խոսում է օրգանիզմի բնական դիմադրողականության բարձրացման մասին: (-Գլոբուլինների քանակը նույնիսկ նվազում է, որը ցուցանում է ատուոինոտոքսիկացիայի բացակայության մասին:

Ապաքինումը կազմում է 94-96 (, սակայն պետք է նշել, որ դեղանյութերի համակցության դեպքում բուժումը 1,5-2 օր կրճատվում է համեմատած դիսպարկոլի հետ:

Ամփոփելով կատարված հետազոտությունների արդյունքները, կարելի է ենթադրել, որ մեր կողմից առաջարկված համակցությունը առողջ կենդանիների օրգանիզմի կլինիկա-արյունա-կենսաքիմիական ցուցանիշների վրա ոչ մի բացասական ազդեցություն չի թողնում: Զգալիորեն կրճատում է բուժման օրերի քանակը, ապահովում է բարձր կենսունակություն (խիստ նվազում է անկման տոկոսը, աղյուս. 2):

Աղյուսակ 2. Բուժման արդյունքները

Պատրաստուկներ	Ընդհանուր գլուխ	Առողջացել են	Անկած գլուխ
Համակցություն	25	24 (96%)	1 (4%)
Դիսպարկոլ	37	27 (73%)	10 (27%)

Ստացված տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ մեր կողմից առաջարկվող նոր համակցության օգտագործումը, ըստ երևույթին, կարգավորում է իմունային պատասխանը, բարձրացնում օրգանիզմի հակաթրեսային կայունությունը, ինչը չափազանց կարևոր հանգամանք է խոզաբուծության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորյան Գ.Ս., Մանասյան Ա.Վ.* Գլոբուլատեսական կենդանիների մատղաշի ոչ վարակիչ հիվանդություններ: Երևան, Զայաստան, 1992.
2. *Մանասյան Ա.Վ.* Գլոբուլատեսական կենդանիների ներքին ոչ վարակիչ հիվանդություններ: Երևան, 2000.
3. *Кондрахин И.П., Курилов Н.В., Малахов А.Г. и др.* Клиническая лабораторная диагностика в ветеринарии. М., Агропромиздат, 1985.

Ստացվել է 24.06.2009